ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 112-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻՑ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՍԵՐՎԻՏՈՒՏՈՎ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 210-213 հոդվածների, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 50-րդ հոդվածի և Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի տնօրեն՝ Ռ.Խաչատրյանի առաջարկը. Արենի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հողամասերում համապատասխան հետազոտությունների, անտառհիմնման ու բնապահպանական ծրագրերի իրականացման նպատակով՝ Արենի համայնքի Գնիշիկ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, սույն որոշման հավելված 1-ով ներկայացված համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատարածքները, 10 տարի ժամկետով, անհատույց, սահմանափակ օգտագործման իրավունքով (սերվիտուտով) տրամադրել Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամին:

2. Սերվիտուտով տրամադրված տարածքներում գտնվող խմելու և ոռոգման ջրի ջրաղբյուրները ինչպես նաև ջրագծերը ամբողջությամբ վերահսկվում են Արենիի համայնքապետարանի կողմից:

3. Սույն որոշմամբ տրամադրված հողատարածքներում իրականացվող ծրագրերի արդյունավետությունից և անհրաժեշտությունից ելնելով հետագայում վերանայել տրամադրման ժամկետը:

4. Արենի համայնքի բնակիչները իրավունք ունեն անարգել օգտվել հատկացված տարածքներից՝ խոտհնձի, խոտաբույսերի հավաքման և համատեղ համաձայնեցված այլ նպատակներով:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված 1

Արենի համայնքի ավագանու

21.08.2025թվականի թիվ 112-Ա որոշման

Հ/հ	Հողամասի գտնվելու վայրը	Նպատակային նշանակությունը, հողատեսքը	Մակերեսը (հա)	Հողամասի ծածկագիրը	Վկայականի համարը
1	Արենի համայնք, Գնիշիկ բնակավայր	Գյուղատնտեսական արոտավայր	36,56132	10-017-0231-0020	N 13052025-10-0009
2	Արենի համայնք, Գնիշիկ բնակավայր	Գյուղատնտեսական արոտավայր	37.08343	10-017-0225-0056	N 12052025-10-0020
3	Արենի համայնք, Գնիշիկ բնակավայր	Գյուղատնտեսական արոտավայր	1.91826	10-017-0231-0019	N 13052025-10-0006
4	Արենի համայնք, Գնիշիկ բնակավայր	Գյուղատնտեսական արոտավայր	1.10861	10-017-0231-0018	N 13052025-10-0004

Աշխատակազմի քարտուղար Գ. Սիմոնյան